Եւ յետ այնորիկ ըստ մնաց Կայսերական հրովարտակաց եւ վաւերական գրոց դատարանի, որք ընթերցան յայնժամ յաստենի բազմութեան այլազգեաց, տուաւ հանրագրութիւն սակս խաբէյութեան Ցունաց՝ և 'ի հաստատութիւն սեփհականութեանց Հայոց։ Դառնացեալ յոյժ ընդ այս կեսարիոսի Փոխանորդին, Ճէնաթի՝ Թարգմանին՝ և Թէոդոսի Քարտուղարին, կոչեցին զԱրաբացի Ֆէլլահս Պէյթճալա գիւղին, որք էին կրօնակից ինքեանց, և գրգռեալ յարուցին զնոսա 'ի վերայ ազգին Հայոց, և պատուէր ետուն նոցա երթալ 'ի գիշերի խորտակել զդուռն Սուրբ Փրկչի վանաց՝ տալ յաւարի զինչս նորա՝ եւ կոտորել 'ի բերան սրոյ զմիաբանսն որ 'ի նմա։

Առեալ զայս խրատ գիւղականաց՝ եկին շարունակ զերկուս և զերիս գիշերս 'ի դուռն վանաց, այլ ոչ կարացին որ և իցէ հնարիւք խորտակել և կամ խախտել զերկաթի դուռն և մտանել 'ի ներքս։ դառնացեալ նոցա ընդ այս կատաղութեամբ, սկսան արձակել զհրացանս, եւ ձգել զմեծամեծ քարինս 'ի ներքս։ Լուեալ բնակչաց քաղաքին զաղմուկս նոցին և զդղրդումն խաժամուժ ամբոխին՝ զարհուրեցան յոյժ, և շփոթեալ աղաղակէին թէ պաշարեցաւ քաղաքն 'ի թշնամեաց։ Լուեալ քաղաքապետին և Եէնիչէրի աղասին, բացին 'ի գիշերի զդուռն քաղաքին, և ելին բազմութեամբ զօրաց արտաքս, և յարձակեցան 'ի վերայ ապստամբաց, այլ ոչ կարացին ըմբռնել զոք 'ի նոցանէ։ զի դարձուցին նոքա զզէնս իւրեանց 'ի զօրն և 'ի պարիսպ քաղաքին, և այսպէս խոյս տուեալ աներեւութացան անտի։ Եղան այնուհետեւ պահապան զօրք 'ի պարիսպն 'ի զգուշանալ քաղաքին, եւ զկնի աւուրց ըմբռնեցան յապստամբաց անտի ոգիք 4 և եղան կապանօք 'ի բանտի։ և 'ի ձաղկել զնոսա 'ի հրապարակի, խոստովան եղեն թէ թելադրութեամբ գլխաւորացն Ցունաց արարեալ իցեն զայն։ Եւ յետ արձակելոյ 'ի կապանաց, չոքան առ մեծամեծս այլազգեաց եւ դանկատանօք չարաիսս եղեն զաղէն իւրեանց, թէ գրգռեալ զմեզ արկին 'ի վտանգ մահու, այժմ յերեսս իսկ հայիլ ոչ կամին։ Եւ յետ կատարելոյ զքննութիւնս զայս, միաբանք Հայոց խնդրեցին 'ի դատաւորէն զայս ամենայն անցս ծանուցանել 'ի